




ԿՐՈՆԱ — ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԿԻՐԱԿՈՍ ՎԻՐԱՊԵՅՈՒ ԿՈՆԴԱԿԸ

Կոնդակը կրոնա-եկեղեցական կամ հրապարակախոսական բնույթի մի նամակ է, որն իր նպատակամղվածությամբ ու նշանակությամբ դուրս է գրուտ անձնական գործածության շրջանակներից¹: Այս ժանրը լայն տարածում ուներ հնում և միջնադարում: Այն գործածական է նաև այսօր:

Հայկազյան բառգիրքը «կոնդակ» բառը նույնացնում է հունարեն «կոնդակիոն»-ին, բնութագրելով այն որպես «Մագաղաթեայ թուղթ, գիր հայրապետական, գիր յիշատակաց, կտակ եւն, գալարեալ գնդաձեւ»²:

Ստեփանոս Մալխասյանցը շրջանառության մեջ է դնում նաև «անդրանիկ կոնդակ» բառակապակցությունը՝ մեկնաբանելով այն որպես «առաջին շրջաբերական կոնդակ, որ հրատարակում է նորընտիր կաթողիկոսը»³:

Կոնդակները կարևոր սկզբնաղբյուրներ կարող են համարվել պատմության այս կամ այն կննդոտ հարցի լուծման ասպարեզում: Այս երևույթը հետևյալ կերպ է բնութագրում Գյուտ քահանա Աղանյանցը. «Պատմությունը ձեւանում է աղբիւրներից, ուստի և մի ազգի պատմութիւն կարելի է ուսումնասիրել նորա աղբիւրներից, որոնք զանազան տեսակ են լինում. և նոցանից գրաւոր աղբիւրները, թէպէտ ժամանակով անելի յետին, բայց անհամեմատ կատարեալ եւ բազմաթիւ ու բազմատեսակ են. դոցա պատկանում են այլև այլ պատմական գրուածքներ, դիւանագրեր, կոնդակներ, նամակագրութիւններ, յիշատակարաններ եւ ամէն տեսակ գրաւոր վաւերագրեր:

Եթէ ընդունենք, ուրեմն, որ պատմութիւն ուսումնասիրելը կարևոր եւ պիտանի գործ է, պէտք է ընդունենք, որ անհրաժեշտ են և այն աղբիւրները, որոնց վերայ հենւում է պատմութիւնը»⁴:

Այսպիսի մի կոնդակ է 1441 թվականին Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի կողմից գրված շրջաբերականը՝ ուղղված քրիստոնյա աշխարհին և մասնավորապես հայ ազգին, գերխնդիր ունենալով բանադրանքից ազատել արթուակից կաթողիկոսություններին, թեմերին և այլն:

¹ Литературная энциклопедия, т. девятый, М., 1935, с. 171—172.

² Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 1115:

³ Հայերէն բացատրական բառարան, կազմեց Ստ. Մալխասեանց, հ. Բ, էջ 467:

⁴ Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ա.—Բ (1780—1834), խմբագրեց Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1893, էջ Բ:

Այս կոնդակին առաջին անգամ ԺԸ դարում անդրադարձել է Ղուկաս Ջահկեցին՝ տպագրելով այն «Դրախտ ցանկալի» գրքում. «Եւ գիտելի է, զի յորժամ նստաւ տէր Կիրակոս տիեզերական հայրապետն յընդհանրական Աթոռն Սուրբ Էջմիածին՝ փակողն եւ բացողն արքայութեան երկնից եւ ծնողն հասարակաց, հայրախնամ գթով այցելութեամբ այց արար աթոռոցն անհնազանդեցելոց եւ ներողութեամբ եթող զմեղս նոցա եւ գրեաց ընդհանրական թուղթս արձակման»⁵:

Ջահկեցուց հետո այն քննարկման առարկա է դարձել Միքայել Չամչյանի, Ն. Ակինյանի և այլոց կողմից:

Սակայն Ակինյանի իսկ վկայությամբ իր ձեռքի տակ գտնվել է կոնդակի մեկ այլ օրինակ. «Կիրակոս կաթողիկոսի արձակման Կոնդակն ունիմ ձեռքս նոր օրինակութեամբ մը, զոր գտայ Հ. Գ. Գալէմքեարեանի ձեռագիր մնացորդաց մէջ»⁶: Այնուհետև անվանի գիտնականը ցավ է հայտնում, որ ձեռագրում պահապանված չէ գրչի անունը. «եւ ոչ ինչ բնագրէ առնուած ըլլալը, բայց կերեալ թէ սկզբնագրէ մը ընդօրինակուած է, որուն թէ ողղագրութիւնքն եւ թէ համառօտագրութիւնքն ճշդիւ պահուած են»⁷: Ակինյանն ավելացնում է նաև, որ առաջիկայում պատրաստվում է հրատարակել այս բնագիրը: Հետագա հրատարակված և ոչ մի գործում չգտանք խոստացված բնագիրը:

Վերոհիշյալ օրինակը համեմատելով Ջահկեցու հրատարակած օրինակի հետ՝ Ակինյանը հետևյալ եզրակացությունն է անում. «Կոնդակս առանձնաձև է նաեւ Ղազար Ջահկեցի, բայց, ինչպէս ծանօթութեանց մէջ դրուած նոսրերութիւնք մատնացոյց կրնեն ըստ կամի փոփոխուած եւ յաւելուածներ, նոյնիսկ հակաժամանակագրական կէտեր»⁸:

Բարգեն Կյուլիսերյանը կոնդակիս մեկ այլ տարբերակի է հանդիպում Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց ձեռագրատանը. «Մինչեւ ցարդ Վիրապեցիին միայն մէկ կոնդակը ծանօթ էր հայ մատենագրութեան մէջ,—գրում է Կիլիկիո կաթողիկոսը,—այսինքն՝ այն, զոր Ջահկեցին հրատարակած է իր «Դրախտ ցանկալի» գործին մէջ, որ երկրորդ անգամ լոյս տեսաւ Աղթամարի կաթողիկոսաց Գառաջանագրքին մէջ Հայր Ներսէս Ակինեանի հոգացողութեամբ»⁹:

Կյուլիսերյանի այս երկու հրատարակությունների նույնացման պատճառը, գուցե, խմբագրական առումով մոտ լինելն էր:

Աշխատանքի բերումով կոնդակիս բոլորովին մեկ այլ տարբերակի հանդիպեցինք Մաշտոցի անվան Մատենադարանի № 4669 ձեռագրի էջերում¹⁰:

⁵ Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի, շարադրեալ ի Ղազարու աստուածաբան վարդապետէ Ճահկեցույ, ի փառս սրբոյն Էջմիածնի, Կ. Պօլիս, 1735, էջ 618:

⁶ Գառաջանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, պատմական ուսումնասիրութիւն, գրեց Հ. Ներսէս վ. Ակինեան, Վիեննա, 1920, էջ 18:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

⁹ Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), գրեց Բարգեն Ա. աթոռակից կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիոյ, 1939, Անթիլիաս—Լիբանան, էջ 1141:

¹⁰ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 4669, էջ 201բ—6բ: Տես նաև № 9622 ձեռագիրը, ինչպէս նաև «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր եպս. Պողարեան, հտ. հինգերորդ, Երուսաղեմ, 1971, էջ 222—223 (ձեռ. 1490) և էջ 478—479 (ձեռ. № 1651), Բարգեն Կյուլիսերյանի «Ցուցակ հայերէն ձեռագրաց Կարմիր—վանուցն Անկիրիոյ», Անթիլիաս, 1956, էջ 236 (ձեռ. № 43):

Ջահկեցու, Չամչյանի, Ակինյանի հրատարակած տարբերակները ներկայացնում են կոնդակի առաջին հատվածը՝ արձակման բաժինը, Կյուլիսերյանին՝ կամայական փոփոխություններն ու ենթաբաժանումների բացակայությունը, իսկ Մատենադարանի № 4669 ձեռագիրը առավել ամբողջական է և ունի հետևյալ ենթաբաժինները.

ա. 201բ—Յա Դարձեալ զկնի բանադրանացն, զոր յիշեաց եւ մեղադրեաց երից երանեալ եւ երկրորդ լուսաւորիչն, այլեւ նորոգիչ Հայոց ազգիս սուրբն Գրիգոր Տաթեւացին, յոր եւ խրատէ զղջացեալք յետոյ ոմանք ախթամարցիք եւ հնազանդեալ Սուրբ Աթոռոյն Էջմիածնայ ընկալան արհնութիւն ի Կիրակոսէ կաթողիկոսէն Հայոց, որ է այս—Ես՝ Կիրակոս ծառայ ծառայացդ....:

բ. 203ա—6բ Խրատ կանոնական ընդհանուր ամենայն հաւատացելոց ի Քրիստոս, ասացեալ Կիրակոսի Սուրբ Էջմիածնայ կաթողիկոսի—/// 203բ/ Մի ոք իշխեսցէ զանկեալն ի կարգէ քահանայութեան...»¹¹:

Կյուլիսերյանին հայտնի տարբերակը գրվել է 1790 թվականին, իսկ Մատենադարանի օրինակը գաղափարվել է 1675 թվականին, այսինքն՝ երուսաղեմյան ձեռագրից 115 տարի առաջ: Հաճախ հեղինակները կամ գրիչները օգտագործում են Կիրակոս Վիրապեցու կոնդակի այն հատվածը, որը ներկայացնում է բանադրանքներից արձակելու բաժինը, բացառությամբ Անկյուրիայի ձեռագրացուցակի տարբերակի, որտեղ ամփոփված են միայն կանոնական թղթերը: Այս առումով կոնդակն ու թղթերն իրար հետ պարունակող տարբերակներից Մաշտոցյան Մատենադարանի ներքոհիշյալ տարբերակը մեզ հայտնի վաղագույն օրինակն է¹²:

Կարելի է եզրակացնել, որ կոնդակն ու կանոնական թղթերը գրվել են իրարից տարբեր ժամանակներում և այլ շարժառիթներով: Այս առումով իսկ Կյուլիսերյանը նկատում է. «Եթէ այս կոնդակին առաջին մասը իր հարազատութեամբ չյայտներ Վիրապեցիին ոգին ու ոճը եւս, պիտի չվարանէի անվանել նկատել զայն, վասն զի ատոր միւս մասերուն մէջ մշակուած նիւթերը կրնային ուրիշ տեղ մը գրուիլ, բայց ոչ կոնդակի մը մէջ»¹³:

Երուսաղեմյան տարբերակի ենթաբաժանված չլինելը տարակուսանքի մէջ է գցում Կյուլիսերյանին. «Ասոնց առաջինն է Վիրապեցիի վերնագրին կցուած կանոնական գրութիւն մը, որ կը բաղկանայ երեք որոշ հատուածներէ»¹⁴: Կանոնական թղթերը, որպէս առանձին գործ, կարծես պետք է

¹¹ Մատենադարան, ձեռ. № 4669, 201բ—6բ:

¹² Նույն ձեռագրի 174ա—85բ էջերում ամփոփված է մեկ այլ նյութ «Կարգ եւ թիւ կաթողիկոսաց Հայոց զոր հաւաքեաց ի գրոց սրբոց» խորագրով, որը յորատւեալ մի գալագանագիրք է: Մէջ բերենք մեր նյութին առնչվող հատվածը (նույն տեղում, էջ 179աբ). «Նստի յԱթոռն Էջմիածնայ տէր Կիրակոս կաթողիկոս, զոր ի սորա ժամանակս հնազանդեցան յԱղթամարայ առաջնորդք եւ բոլոր ժողովրդօքն հանդերձ լալով եւ ապաշտաւանօք եւ մեղայ ասելով եւ ուխտեցին մի եւս համարձակիլ այնպիսի յանդգնութիւնս, այլ կալ հնազանդ յԱթոռոյն Էջմիածնայ: Չոր տեսեալ տէր Կիրակոս զճերմ արտաւ[ու]օք եւ զապաշտաւանեաց զեղջն արհնեաց զնոսա եւ արձակեաց ի կապիցն եւ ընկալաւ զնոսա խառնելով ի կատարեալ պատմութիւն բանադրանաց եւ կապից եթէ կամիս գտցես ի լիակատար պատմութիւն, որ կայ ի Կանոնգիրքս նայել յարձակումն արհնութեամբ»: Վազգեն Հակոբյանը պարզում է, որ այս նյութը, այլ նյութերի հետ միասին Կանոնագիրք է ներմուծել Ազարիա Սասնեցին 1609 թվականին (Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1971, էջ XL):

¹³ Բ. Կյուլիսերյան, նշված աշխ., էջ 1142:

¹⁴ Նույն տեղում, էջ 1198:

հայտնի լինելը Կյուլիսերյանին՝ հղվելով իր իսկ կազմած «Ցուցակ հայերէն ձեռագրաց Կարմիր—վանուցն Անկիւրիոյ» աշխատությունից¹⁵: Սակայն հրատարակվող բնագրի մասին խոսելիս Կյուլիսերյանը ոչ մի ակնարկ չի անում այս կապակցությամբ: Եվ այս է պատճառը, որ նա գալիս է հետևյալ եզրահանգմանը. «Խնդիրը կրնայ լուծուիլ, երբ Վիրապեցիէն մնացած կոնդակներ, եթէ երբէք մնացած են մատենադարաններու խորշերուն մէջ, երեսան բերուին եւ գտնուի ատոնց մէջ այս կոնդակին հաւասարը, եւ կամ գտնուին այս կանոնական գրութեան ուրիշ օրինակներ անկախ Վիրապեցիի կոնդակին վերնագրէն»¹⁶:

Մաշտոցյան Մատենադարանի օրինակը, համեմատելով Կյուլիսերյանի հրատարակած երուսաղեմյան տարբերակի հետ, նկատեցինք, որ հադազատ է մնացել ԺԵ դարի ոգուն թե՛ կառուցվածքային և թե՛ լեզվա-ոճական առումներով: Բերենք մի քանի օրինակներ՝ առավել առարկայական դարձնելու մեր եզրահանգումները.

Երուսաղեմ, ձեռ. № 182

«Կիրակոս ծառայ ծառայիցդ Աստուծոյ Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ողորմութեամբ եւ շնորհօք կաթողիկոս Առաքելական Աթոռս Գրիգորի Լուսաւորչին մերոյ ի Վաղարշապատու Սուրբ Էջմիածնիս եւ ամենայն Հայոց, գրեմ շնորհօք թագաւորին իմոյ Աստուծոյ՝ օրհնութիւն, գոհութիւն, փառք եւ պատիւ եւ երկրպագութիւն անհասանելի մարդասիրի եւ հրաշագործ անեղին Աստուծոյ՝ Հօր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգւոյն»¹⁷:

Մատենադարան ձեռ. № 4669

Ես, Կիրակոս ծառայ ծառայացդ Աստուծոյ անուամբն անեղին Աստուծոյ՝ Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ողորմութեամբ եւ շնորհօք Յիսուսի Քրիստոսի կաթողիկոս Առաքելական Աթոռս սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ եւ Վաղարշապատու Սուրբ Էջմիածնիս եւ ամենայն Հայոց, գրեմ շնորհօք թագաւորին իմոյ Աստուծոյ արհնութիւն, գոհութիւն, երկրպագութիւն եւ փառք արհնելոյն ամենայն սրբոց, բերան երկնաւորաց մարմնաւոր որդոց մարդկան եւ ասեմ արհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արհնեաց զմեզ ամենայն հոգեւոր արհնութեամբ երկնաւորս ի Քրիստոս եւ ասեմ. Բարձր առնեմ զքեզ Աստուած իմ»¹⁸:

Այնուհետև Մաշտոցյան Մատենադարանի № 4669 ձեռագիրը անցնում է բուն նյութին, այն է՝ արձակմանը բոլոր կապանքներից ու բանադրանքներից. «Գրեմ արհնութիւն, պահպանութիւն եւ արձակումն յամենայն կապանաց բոլոր ազգաց եւ ամենայն լեզուաց քրիստոնէից ողղափառաց, կենդանեաց եւ հանգուցելոց»¹⁹:

Իսկ երուսաղեմական տարբերակը մեզ առաջարկում է յուրատեսակ մի հարցուպատասխանի՝ հավանորեն հավելված հետագայում. «Հարց.—Զի՞նչ է պատճառ, որ Սուրբ Էջմիածին հաստատեցաւ»²⁰: Այս հարցմանը հետևում

¹⁵ Ցուցակ հայերէն ձեռագրաց Կարմիր—վանուցն Անկիւրիոյ, Անթիլիաս, 1956, էջ 236:

¹⁶ Բ. Կյուլիսերյան, նշված աշխ., էջ 1198:

¹⁷ Նույն տեղում, էջ 1403:

¹⁸ Մատենադարան, ձեռ. № 4669, էջ 201բ—2ա:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Բ. Կյուլիսերյան, նշված աշխ., էջ 1403:

է մի քարոզ, նվիրված սիրո գաղափարին. «Լուարուք քրիստոսասէր անձինք ուղիղք, զի հրամայէ Քրիստոս յԱետարանն, թէ. Ի բազմանալ անօրէնութեան ցամաքեացի սէր բազմաց. Սէրն Աստուած է եւ իւր անունն Սէր է»²¹ և այլն: Կարծում ենք, այսպիսի ներմուծությունները անհարազատ են «Կոնդակի» ներքին կառուցվածքին ու բնույթին:

Ինչպէս նկատել է տալիս, Մատենադարանի առաջին հատվածն իր զուգահեռներն ունի Զահկեցու, Զամչյանի, Ակինյանի օգտագործած օրինակների հետ:

Կյուլիսերանը, շարունակելով իր բնագրաքննական աշխատանքը, հանգում է հետևալ եզրահանգման. «Կոնդակիս երկրորդ հատուածը կը բաղկանայ շարք մը կանոններէ, «մի ոք իշխեսցէ» արգելական սկսվածքով եւ «չըկայ հրաման յԱստուծոյ» վերջաւորութեամբ»²²:

Ինչպէս նկատեցինք, այն բոլորովին անկախ մի նյութ է թե՛ իր խորագրով և թե՛ իր ժամանակագրական առումով (հավանորեն, ավելի ուշ գրված): Ցավով, սակայն, պետք է նշել, որ Մատենադարանի օրինակը ոչ այնքան բավարար վիճակում է հասել մեզ: Բնագրի միջին մասերից կան թափված էջեր, որի պատճառով բնագիրը տեղ-տեղ ընդհատվում է:

Այսուհանդերձ ձեռագրում պահպանվել է մի հատված, որը բացակայում է երուսաղեմական օրինակից: Գնահատելով Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի գրչին պատկանող այս նորահայտ նմուշի արժեքը, կցանկանալինք մեջ բերել ամբողջությամբ.

«/// (սկիզբ՝ թերի) մերոյ Յիսուսի Քրիստոսի սիրով Հոգւոյն, մի առնել կաշառք կամ երեսք վասն ազգականութեան, կամ այլ ինչ իրաց եւ պատկել զմարմնաւոր ազգականս կամ հոգեւոր, թող զկնքաւորն Գ ծնունդ չի հասնիլ, նոյնպէս եւ այլ ազգականաց: Եւ թէ առնեն անօրէնութիւն է եւ անէծք կայ ի վերայ, այնպիսին քակել պարտ է:

Կաթողիկոս, եպիսկոպոս կամ վարդապետ կամ քահանայ, մի իշխեսցէ պսակ դնել ամենայն շաբաթ եւ կիրակի օր՝ տարին բոլոր: Եւ ամենայն շաբաթապահք եւ ամենայն չորեքշաբթի եւ ուրբաթ օր ի բոլոր տարին: Եւ ի Յայտնութեան է օրն եւ Քրիստոսի Տեառն մերոյ Ծննդեան Ը օրն եւ Տեառնընդառաջի օրն եւ Աղուհացից պահոց ԽԸ օրն եւ Քրիստոսի Աստուծոյ ճշմարիտ Յարութեան Զատիկ Խ օրն եւ Քրիստոսի հրաշափառ Համբարձմանն տօնի Թ օրն եւ ի Հոգւոյն Աստուծոյ Գալստեան Ը օրն եւ ի Վարդավառի Գ օրն, յայսմ ատորքս, որ գրեցաք ոչ պսակ դնելոյ հրաման կայ ի յԱստուծոյ եւ ոչ ամուսնութիւն եւ ոչ յանկողնոց. ոչ քահանայից եւ ոչ աշխարհականաց, եւ թէ լինի անգէտս, պարտ է խոստովանել եւ ապաշխարել:

Կաթողիկոսք, եպիսկոպոս կամ վարդապետ կամ քահանայ մի իշխեսցէ զօրինաւոր պսակեալն արձակել կամ բաժանելոյ թո[ւ]ղթս տալ, զի չկայ հրաման Աստուծոյ, եւ թէ ասեմ առաջնորդք՝ ով ոք եւ իցէ, թէ, իշխանութիւն ունիմ բաժանելոյ, զի իշխանութիւն ի ձեռս առաջնորդաց, սուտ է: Զի Աստուած ասէ, թէ զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ: Ապա թէ ինքեանք բաժանեցին մի ոք իշխեսցէ զնոսա բաժանել կամ հրաման տալ պսակելոյ: Ով նոցա հրաման տայ, նա այնմ տայ շնալ²³, յայնժամ եւ ինքն ի շնացողաց կարգի է: Այլ այնպէս կացցեն ինչ եւ եկեսցեն սո միմեանս, բայց

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում, էջ 1200:

²³ Զեռագրում՝ «տանայմնայ շնալ»:

թէ հանց պատճառ լինի, որ բաժանելոյ հրաման կայ, թէ մինն շնայ ընդ այլոց կամ թէ մինն ուրուկ լինի, կամ թէ մինն կախարդ լինի, կամ դիւթ, բոլորոք կամ պիտակ, կամ ազգականք լինի, պատկաց հոգեւոր կամ մարմնաւոր՝ բաժանել պիտի: Եւ երէց, որ Բ կին է արարել, բաժանել պիտի. եւ թէ արեղայն կարգիվի՝ (այսպէս) բաժանելի է, եւ թէ ուրուք Բ կին կենդանի լինի. զիսկին բաժանել պիտի:

Կաթողիկոս, եպիսկոպոս կամ վարդապետ, կրօնաւոր կամ քահանայ կամ սարկաւազ եւ միակեց ոչ ունին հրաման Աստուծոյ եւ ի մէնջ, որ մատակ ձի կամ ջորի կամ էջ պահեսցին. ըստ հրամանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ: Եւ մի պննել հանդերձի, ըստ հրամանի սրբոց կանոնացն, մի ազանել քէմիաց կամ իսկեղաթ կամ մուրապաղ կամ թօթայ կամ զօֆ կամ կտաւիս ջուրայ շապիք կամ շապկներ կամ եւ մի չուխայ կամ մուշտակ ածել ի վերայ թելի, զի այս ձեւ անօրինաց է, այլ զձեռն թեզնիսն տանի որպէս օրէն է եւ մի՛ աղեղն բռնել կամ սուտեր եւ մի՛ բնաւ ամենեւին արին հեղուլ մարդոյ կամ անասնոյ եւ մի՛ գօտի կապել կամ բուշի կամ բարաք կամ քառնաբազ կամ շորեղէն, այլ փոկէ գոտի եղիցի, որպէս օրէն է կարգաւորաց, նոյնպէս եւ միակեցաց եղիցի այս օրէն»²⁴:

«Խրատ կանոնականը» ստեղծելու համար, իր իսկ հեղինակի վկայութեամբ. «Չայս սակաւ բանքս ծայրաքաղ արարի ի բուն կանոնաց, եւ պատուիրեմ ձեզ առնել ոչ միայն զայսոսիկ, այլեւ զամենայն»²⁵:

Կիրակոս կաթողիկոսն իր շարադրանքի ընթացքում հիշում է Հովհաննէս Կոզեռն վարդապետի, Սահակ Պարթև հարապետի և Գրիգոր Լուսավորչի անունները: Սղբյուրագիտական քննությունն եկավ ապացուցելու, որ հեղինակը միջնորդավորված կերպով օգտվում է Բարսեղ Կեսարացու «Գիր կանոնական»-ից: Այսպէս, օրինակ.

Բարսեղ Կեսարացի՝

«Ոչ է արժան քահանային արին հեղուլ մարդոյ եւ ոչ անասնոյ. եւ ոչ որս առնել կամ զենուլ ինչ, այլ զեւթն աղաւթն անդադար մատուցանել. եւ եթէ ոք խոտորի՝ լուծցի յաւմանէն եւ եղիցի նզովեալ»²⁶:

Կիրակոս Վիրապեցի՝

«Կաթողիկոս, եպիսկոպոս կամ վարդապետ, կրօնաւոր կամ քահանայ կամ սարկաւազ եւ միակեց ոչ ունին հրաման Աստուծոյ... մի բնաւ ամենեւին արին հեղուլ մարդոյ կամ անասնոյ...»²⁷:

Վերը բերված մեկ այլ հատվածում, որը նույնպէս բացակայում է Կյուլիսերյանի հրատարակած օրինակում, Վիրապեցին օգտվում է Բարսեղ Կեսարացուց. «Քահանայ մի իշխեսցէ յերեսելի երիւար հեծանել կամ հանդերձս երեսելի զգենուլ, բայց ի խորհրդին, եւ բոկ եւ անպատմունճան ի սեղանն մատչել եւ եթէ ոք յանդգնի՝ նզովեալ եղիցի»²⁸:

²⁴ Մատենադարան, № 4669, էջ 204ա—5ա:

²⁵ Բ. Կյուլիսերյան, նշված աշխ., էջ 1410:

²⁶ Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 134:

²⁷ Մատենադարան, ձեռ. № 4669, էջ 204բ—5ա:

²⁸ Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 128:

Չնայած այն բանին, որ Կիրակոս Վիրապեցին իր շարադրանքի համապատասխան հատվածում հիշում է Գրիգոր Լուսավորչի անունը, «ըստ հրամանի սրբոյն Գրիգորի մերոյ», սակայն «Սրբոյն Գրիգորի Լուսավորչին» վերաբերվող կանոնախմբում չգտանք սույն կանոնները: Հեղինակն, այնուամենայնիվ, օգտվում է Լուսավորչի կանոններից: Այսպես, օրինակ.

Գրիգոր Լուսավորիչ

«Պարտ է քրիստոնէից պատուել զաւր կիրակէի, աղաթել եւ հանգչել ի նմա, ապա եթէ ոք պահեսցէ հրէաբար՝ նզովեսցի ի Քրիստոսէ»²⁹:

Կիրակոս Վիրապեցի

«Եւ ի Սուրբ Հոգոյն իջման կիրակէի օրն ի սուրբ Վերնատունն լինելոց է հասարակաց մեր յարութիւնն եւ այս կիրակէս մեծ է եւ պատուական քան զամենայն Տէրունական օր: Պարտ է սրբութիւն տանել, կարգաւորք եւ ամենայն աշխարհականք, արք եւ կանայք ինն օր պահք պահել եւ հաղորդիլ ի սուրբ մարմնոյ եւ յարենէ Տեառն, զի յայս կիրակէս է մեր յարութիւն, անմահութիւն եւ անվախճան թագաւորութիւն: Եւ այս ատուրս երեկոյ ոչ լինի, եւ այս է Ը դարն, որ ոչ փոխի»³⁰:

Վիրապեցի կաթողիկոսի «Խրատ կանոնական»-ում գտանք մի քանի այլ հատվածներ նաև «Կանոնք Լաւողիկեայ» կանոնաշարքից:

Կանոնք Լաւողիկեայ

«Չէ մարթ ոյք յեկեղեցոյ մերոյ եւն ի պէսպէս եւ ի ցոփ հարսանիս այլազգեաց մերձեցուցանել զուստերս եւ զդստերս, կին տալ նոցա կամ կին առնուլ ի նոցանէ»³¹:

Կիրակոս Վիրապեցի

«Եւ թէ քրիստոնէայ զաւակս տալք անօրինաց ի կնութիւն զհոգի նորա կորուսանէ եւ դուք պարտական լինիք արեան նորա, մարմնով գերի լինել լաւ է, քան թէ հոգով, եւ ծնողաց հոգոց կորուստ է»³²:

Եվս մեկ օրինակ.

Կանոնք Լաւողիկեայ

«Չէ արժան առ ամենայն այլազգիս խնամութիւն առնել կամ առ հեղձուածողս, քայց եթէ յանձն առնուցուն հաւատալ ի սուրբ կաթողիկէ եկեղեցի»³³:

Հաւատքին վերաբերվող հատվածներում նա նույնպես միջնորդավորված կերպով է օգտվում Նիկիական հանգանակից, որն իր գնահատմամբ «Արմատ է կենդանութեան մերոյ եւ հիմն տանարի բարեգործութեան մե-

²⁹ Նույն տեղում, էջ 249:

³⁰ Բ. Կյուլիսերյան, նշվ. աշխ., էջ 249:

³¹ Կանոնագիրք Հայոց, էջ 231:

³² Մատենադարան, № 4669, էջ 206բ:

³³ Կանոնագիրք Հայոց, էջ 236:

րոյ»³⁴: Օգտվելով նախորդ հոգևոր հայրերի ճառերից ու խրատներից, նախկին ճգնակյացը հավելում է նաև սեփական փորձն ու զգացողական ըմբռնումները:

Հետագա հատվածներում նկատելի են հետքեր Վարդան Այգեկցու «Վասըն անքուն որդանց» և դժոխքին վերաբերող ճառերից³⁵

Այսպիսով, Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի գրական ժառանգությունը, այն է՝ Կոնդակը, հետագա դարերի ընթացքում գաղափարվել ու վերարտագրվել է գրիչների կողմից՝ ենթարկվելով տարբեր փոփոխությունների, որի հետևանքով բնագիրը ձեռք է բերել նոր խմբագրություններ ու տարբերակներ: Այն իր ժամանակի և հետագա դարերի համար նույնպես, դիտվել է ոչ միայն «թուղթ արձակման ամենայն բանադրանքներից», այլև որպես «Թուղթ հաւատոյ» և «Թուղթ դատաստանի»:

ՀՈՎԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

³⁴ Բ. Կյուլիսերյան, էջ 1411:

³⁵ Նույն տեղում, էջ 1418:

